ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԳԱՅԱՆԵ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

ISSUES OF THE HISTORY AND MATERIAL CULTURE OF ANCIENT ARMENIA IN THE WORKS OF GAYANE KOCHARYAN

ВОПРОСЫ ИСТОРИИ И МАТЕРИАЛЬНОЙ КУЛЬТУРЫ ДРЕВНЕЙ АРМЕНИИ В РАБОТАХ ГАЯНЭ КОЧАРЯН

Գայանե Գրիգորի Քոչարյանը ծնվել է 1949 թ. սեպտեմբերի 30-ին Երևանում: 1966-ին ավարտելով Ն.Կ. Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Երևանի պետական համալսարան: 1966–1971 թթ. սովորել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության բաժնում: 1971–1978 թթ. աշխատել է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին Հայաստանի հնագիտության բաժնում՝ որպես ավագ լաբորանտ, 1978-ից՝ կրտսեր գիտաշխատող: 1984 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Դվինը անտիկ դարաշրջանում» թեմայով և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (Գիտական աշխատանքների ցանկ, N 14): Նրա ղեկավարն է եղել անվանի հնագետ Գևորգ Տիրացյանը: 1991 թ. համալրված ատենախոսությունը որպես մենագրություն լույս է տեսել Հայաստանի ԳԱ հրատարակչությունում (N 21): 1991–2021 թթ. հեղինակը շարունակել է աշխատել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին Հայաստանի հնագիտության բաժնում՝ որպես ավագ գիտաշխատող, 2022–2025-ին՝ գիտական աշխատող:

1971-2018 թթ. լինելով «Դվինի հնագիտական արշավախմբի» մշտական անդամ՝ մասնակցություն է ունեցել նաև 1975, 1977–1978 թթ. Մոխրաբլուրի, 1983-ին՝ Ավանի, 1990-ին՝ Հողմիկի հնագիտական հուշարձանների դաշտային հետազոտական աշխատանքներին:

Գայանե Քոչարյանի հեղինակած գիտական հրապարակումները, որոնցից առաջինը, ի դեպ, լույս է տեսել «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի էջերում (N 1), նվիրված են Հին Հայաստանի (մ.թ.ա. V – մ.թ. IV դդ.) նյութական մշակույթի, սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական պատմության ուսումնասիրությանը: Դրանցում հիշյալ խնդիրները քննարկվում են հնագիտական և գրավոր սկզբնաղբյուրների տվյալների համեմատական վերլուծությամբ:

Մասնավորապես հեղինակի հետազոտությունների թիրախն են դարձել հին հայկական քաղաքային լանդշաֆտը (N 28, 30, 33, 34, 37, 44, 46), պաշտպանական համակարգը (N 23, 29, 32, 74), գյուղատնտեսությունը (N 53, 54), դիցարանը (N 45, 47), քաղաքական պատմությունը (N 39, 40), խնդիրներ, որոնց նա անդրադարձել է տարբեր հուշարձանների պեղումների և հետախուզական աշխատանքների տվյալների հիման վրա (N 6, 50):

Նկ. 1. Լաուրա Վարդանյանը և Գայանե Քոչարյանը (աջից) Դվինի պեղումների ընթացքում, 1973 թ. (Դվինի արշավախմբի արխիվ)

Նկ. 2. Դվինի արշավախմբի անդամները՝ Արամ Քալանթարյան, Գայանե Քոչարյան, Աղավնի Ժամկոչյան, Ֆրինա Բաբայան, Նյուրա Հակոբյան, Դվին, 1979 թ. (Դվինի արշավախմբի արխիվ)

Այդ հուշարձանների թվում առանցքային նշանակություն ունի Դվինը: Մասնավորապես Դվինի անտիկ շերտը Գ. Քոչարյանը ներկայացրել է ինչպես պեղումների հաշվետվությունների ձևով (N 9, 13, 15, 17, 18, 19, 20, 22, 51, 55, 58, 60, 68), այնպես էլ ընդհանուր պատմամշակութային զարգացումների համատեքստում (N 3, 7, 14, 21, 43, 49, 52, 61, 63, 65, 67, 69, 73, 75): Հեղինակը անդրադարձել է նաև բնակավայրի պաշտպանական համակարգին (N 24), առանձին շինությունների (N 16, 57), ինչպես նաև դամբարանադաշտին ու թաղման ծեսին (N 8, 11, 70) վերաբերող առանձին խնդիրներին: Կարևոր են

Դվինի՝ որպես ամրոց-սրբավայրի հիմնական գործառույթին վերաբերող աշխատանքները (N 25, 41, 59, 64, 66, 71, 72): Հեղինակն անդրադարձ է կատարել նաև Դվինի արվեստին և արձանագործությանը (N 26, 27, 36, 48), կավե առարկաներին և դրանց պատրաստման միջոցներին (N 1, 10, 12, 62), քարե կենցաղային ու ծիսական առարկաներին (N 2, 4, 5), ինչպես նաև կնիքագործությանը (N 56): Հատուկ հետազոտության է ենթարկվել Դվին տեղանվան ծագման խնդիրը (N 35, 38): Հիշյալ աշխատանքներից երեքը մենագրություններ են, որոնցից մեկը Դվինի պեղումներին նվիրված հաշվետվություն է (N 51), իսկ երկուսը անտիկ Դվինին առնչվող առանձին մենագրություններ են (N 21, 75):

Գ. Քոչարյանի հետազոտությունները վերականգնում են Դվին քաղաքի բազմաշերտ պատմությունը՝ հնագույն ժամանակներից սկսած: Մասնավորապես հնագիտական աշխատանքները բացահայտում են Դվինի գոյության տևականությունը: Այստեղ արձանագրվել են վաղբրոնզեդարյան (մ.թ.ա. III հազ.), վաղերկաթեդարյան (մ.թ.ա. X – VIII դդ.), անտիկ (մ.թ.ա. II – մ.թ. II դդ.) և միջնադարյան (մ.թ. IV – XIII դդ.) մշակութային շերտեր: Հեղինակի հետազոտությունները, ինչպես արդեն նշեցինք, կենտրոնացել են հատկապես անտիկ շերտին վերաբերող խնդիրների վրա:

Գ. Քոչարյանի երկարատև ուսումնասիրությունները պարզել են, որ մ.թ.ա. II դ. մայրաքաղաք Արտաշատի հյուսիսային մատույցների պաշտպանությունը ապահովելու համար վերականգնվում է Դվին ամրոց-սրբավայրը: Պարսպագոտիով ներառված բլրի գագաթի հարթակը կառուցապատվում է քաղաքացիական շինություններով: Մ.թ.ա. II–I դդ. բարեկարգվում են բնակելի շինությունները՝ ճյուղավորված տնտեսական հարկաբաժիններով և շտեմարաններով:

Բլրի հարավարևմտյան ստորոտին՝ Դվինի բազմաշերտ պաշտամունքային կենտրոնի մ.թ. IV–V դդ. և մ.թ.ա. X–VIII դդ. շերտերի միջև, հեղինակը բացահայտել է անտիկ դարաշրջանի գունազարդ խեցեղենով հագեցած մշակութային շերտ: Վաղմիջնադարյան հոգևոր շինությունների հիմնապատերի շարվածքում հայտնաբերվել են կրկնակի օգտագործված մեծ թվով սրբատաշ քարեր և անտիկ ժամանակաշրջանի ճարտարապետական մանրամասներ, ինչը վկայում է այստեղ նախաքրիստոնեական պաշտամունքային կառույցների գոյության մասին: Հնագիտական նյութի համեմատական վերլուծությունը պատմաքաղաքական իրադրության համատեքստում հավաստում է, որ առնվազն մ.թ.ա. I հազ. սկզբից Դվինի բլրի ստորոտին գտնվող սրբավայրը պահպանում էր իր գործառույթը Արտաշիսյան և վաղ Արշակունյաց ժամանակաշրջաններում:

Ոստան Հայոց գավառում, Արտաշատի մերձքաղաքային տնտեսական տարածքում, Դվինի և շրջակա գյուղական բնակավայրերի բարգավաճումը պայմանավորված էր Երասխ, Մեծամոր և Ազատ գետերի հովիտներում ոռոգման ցանցի և միջազգային աշխույժ առևտրի առկայությամբ: Համաժամանակյա բնակավայրերի համակարգում Դվին ամրոց-սրբավայրը զատվում էր

վարչատնտեսական և պաշտամունքային կենտրոնի իր կարգավիճակով: Դվինը Արտաշատի պաշտպանական համակարգի բաղկացուցիչ կարևորագույն օղակն էր և ապահովում էր շրջակա գյուղական բնակավայրերի անվտանգությունը, ինչպես նաև վերահսկում դեպի Գառնի, Վարդգեսավան (Վաղարշապատ), Սևանի ավազան ընթացող հաղորդակցության ուղիների կարևոր հանգույցը:

Ներքաղաքական անկայունության և միջավայրի վատթարացող բնապահպանական իրավիճակներից ելնելով՝ Խոսրով Բ Կոտակ Արշակունին (330–338 թթ.) IV դ. 30-ական թթ. արքունիքը Արտաշատից տեղափոխում է Դվին, որն առանձնանում էր իր աշխարհագրական շահեկան դիրքով, աշխարհիկ և հոգևոր իշխանություն համատեղող գործառույթի տևականությամբ և տնտեսական նշանակալի ներուժով: Դվինի մերձակա գյուղերն աստիճանաբար միավորվում են՝ կազմելով քաղաքայնացող բնակավայրի պարսպապատ թաղամասերը: Սրանով հնագույն սրբավայրում դրվում է նոր դավանանքի նշանակալի կենտրոններից մեկի ձևավորման սկիզբը:

Այսպիսով, Գայանե Քոչարյանի ավելի քան կես դար տևած գիտական պրպտումները բացահայտում են այն նախադրյալները, որոնք ընկած են միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի ձևավորման հիմքում: Այդ աշխատանքները էական ներդրում են Հայոց պատմության ամենանշանակալի հատվածներից մեկի՝ Արտաշիսյան և Արշակունյաց վաղ շրջանի ուսումնասիրման գործում:

Գիտական աշխատանքների ցանկ

1. Քոչարյան Գ. 1974, Դվինի հելլենիստական դարաշրջանի խեցեղենը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 5, 82–97:
2. Քոչարյան Գ. 1974, Ծածկի քարե սալ Դվինից, Լրաբեր հասարակական գիտությունների, N 11, 102–105:
3. Кочарян Г. 1976, Культура Двина античного времени, Пиотровский Б. (ред.), XIV Международная конференция античников социалистических стран «Эйрене»: тезисы докладов, 18–23 мая, Ереван, изд. АН Армянской ССР, 209–210.
4. Քոչարյան Գ. 1977, Անտիկ դարաշրջանի զոհասեղան Դվինից, Պատմա-բանասիրական հանդես, N 2, 280–286:
5. Քոչարյան Գ. 1978, Դվինից հայտնաբերված արտադրական նշանակությամբ սալ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, 95–98:
6. Արեշյան Գ., Սիմոնյան Հ., Սարգսյան Գ., Քոչարյան Գ., Օհանյան Հ. 1979, Հայագիտական կենտրոնի 1977–78 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները, Բանբեր Երևանի համալսարանի, N 2, 205–224:
7. Քոչարյան Գ. 1979, Դվինը անտիկ դարաշրջանում, Պատմա-բանասիրական հանդես, N 2, 272–277:

8. Քոչարյան Գ. 1979, Դվինի հելլենիստական դարաշրջանի կարասային թաղումները, Առաքելյան Բ. (խմբ.), Հայկական ՍՍՀ-ում 1977–1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 38–39:

9. Калантарян А., Акопян Н., Жамкочян А., Бабаян Ф., Кочарян Г. 1979, Раскопки Двинской экспедиции, Рыбаков Б. А. (ред.), Археологические открытия 1978 года, Москва, «Наука», 521.

10. Քոչարյան Գ. 1980, Անտիկ դարաշրջանի դուրգի անիվ Դվինից, Վարդումյան Դ., Աբրահամյան Լ. (խմբ.), Երիտասարդ գիտնականների IV կոնֆերանս, նվիրված Վ.Ի. Լենինի ծննդյան 110-ամյակին, զեկուցումների թեզիսներ, փետրվարի 26–27, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 8–9:

11. Քոչարյան Գ. 1980, Հելլենիստական դարաշրջանի դամբարանադաշտ Դվինում, Պատմա-բանասիրական հանդես, N 2, 277–285:

12. Քոչարյան Գ. 1980, Անտիկ դարաշրջանի դուրգի անիվներ Դվինից, Լրաբեր հասարակական գիտությունների, N 9, 79–82:

13. Քոչարյան Գ. 1983, Նոր նյութեր Դվինի հելլենիստական բնակավայրի վերաբերյալ, Առաքելյան Բ. (խմբ.), Հայկական ՍՍՀ-ում 1981–1982 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, 21–23 մարտի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 25–26:

14. Кочарян Г.Г. 1984, Двин в античную эпоху, Автореферат кандидатской диссертации, Институт археологии и этнографии АН АрмССР, Ереван, «Эчмиадзинская тип. АН АрмССР».

15. Քոչարյան Գ. 1985, Նոր նյութեր Դվինի հելլենիստական բնակավայրի վերաբերյալ, Առաքելյան Բ. (խմբ.), Հայկական ՍՍՀ-ում 1983-1984 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, ապրիլ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 38–39:

16. Քոչարյան Գ. 1987, Դվինի հելլենիստական դարաշրջանի նորահայտ շինությունը, Պատմա-բանասիրական հանդես, N 4, 221–226:

17. Քոչարյան Գ. 1987, Նոր նյութեր Դվինի հելլենիստական բնակավայրի վերաբերյալ, Առաքելյան Բ. (խմբ.), Հայկական ՍՍՀ-ում 1985–1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, 16–20 մարտի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 46–47:

18. Кочарян Г.Г. 1988, Новые материалы из раскопок Двина эллинистической эпохи, Аракелян Б.Н., Кошеленко Г.А., Тирацян Г.А. (ред.), Третий всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на Востоке, Тезисы докладов, май 1988, Ереван, изд. АН Арм. ССР, 38–39.

19. Քոչարյան Գ. 1989, Նոր նյութեր Դվինի հելլենիստական բնակավայրի վերաբերյալ, Տիրացյան Գ. (խմբ.), Հայկական ԽՍՀ-ում 1987–1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, մայիս, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

20. Քոչարյան Գ. 1990, Նոր նյութեր Դվինի հելլենիստական բնակավայրի վերաբերյալ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, 98–103:

21. Քոչարյան Գ. 1991, Դվին III. Դվինը անտիկ դարաշրջանում, Հնագիտական պեղումները Հայաստանում, N 22, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ.:

22. Քալանթարյան Ա., Ղաֆադարյան Կ., Հակոբյան Ն., Քոչարյան Գ., Պետրոսյան Մ., Հակոբյան Ա. 1994, Նոր տվյալներ Դվինի Սբ. Գրիգոր եկեղեցու վերաբերյալ, Քալանթարյան Ա., Հարությունյան Ս. (խմբ.), Հայաստանի Հանրապետությունում 1991-1992 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, Հայաստանի ԳԱԱ հրատ., 46–48:

23. Քոչարյան Գ. 1994, Շիրակի պաշտպանական համակարգի ուրվագծման փորձ, Արշակյան Ա. և այլք (խմբ.), Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հանրապետական առաջին գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, «Առաջընթաց», 35–36:

24. Քոչարյան Գ. 1996, Անտիկ Դվինը Արտաշատի պաշտպանական համակարգում, Հանդէս ամսօրեայ, N 1–12, 336–359:

25. Քոչարյան Գ. 1996, Ամրոց-սրբավայր զույգը Հայաստանի արքայանիստ քաղաքներում, Հարությունյան Ս. (խմբ.), Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հանրապետական երկրորդ գիտաժողովի զեկուցումների թեզիսներ, Գյումրի, «Կումայրի» հրատ., 14-15:

26. Քոչարյան Գ. 1996, Դվինի արձաններից երկուսի վերաթվագրման հարցի շուրջ, Քալանթարյան Ա., Հարությունյան Ս. (խմբ.), Հայաստանի Հանրապետությունում 1993–1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 79–80:

27. Kotcharian G. 1996, Tête masculine d'un prince à tiare radiée (105), Tête masculine d'un prince à tiare (106), Santrot J. (réd.), Arménie. Trésors de l'Arménie ancienne des origines au IVe siècle, Paris, Somogy Editions d'Art, 114.

28. Քոչարյան Գ. 1996-1997, Բարոյահոգեբանական իրադրության դրսևորումը Հայաստանի արքայանիստ քաղաքների համակարգում, Իրան-Նամէ, N 6/1, 53–56:

29. Քոչարյան Գ. 1997, Արարատյան գոգավորության պաշտպանական համակարգը, Պետրոսյան Ս. (խմբ.), Թեզիսներ հանրապետական գիտաժողովի, նոյեմբեր, Երևան, ՀՀ Պաշտպանության նախարարություն հրատ., 3–4:

30. Քոչարյան Գ. 1998, Ոստան Հայոց գավառը Արտաշատի մերձքաղաքային տնտեսական տարածք, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, 172–176:

31. Քոչարյան Գ. 1998, Արտահայտչամիջոցների ոճաբանական վերլուծությամբ թվագրման փորձ, Աշտանակ, Բ, 154–161:

32. Քոչարյան Գ. 1998, Արարատյան գոգավորության պաշտպանական համակարգը, Շահբազյան Փ. (խմբ.), Ազգ, պետություն, բանակ. Հանրապետական գիտագործնական կոնֆերանս, (Զեկուցումներ, ելույթներ), Երևան, ՀՀ Պաշտպանության նախարարություն, 25–30:

33. Քոչարյան Գ. 1998, «Արքունի ծառազարդ ապարանքի» ավանդականությունը Հայկական լեռնաշխարհում, Հայրապետյան Ս. և այլք (խմբ.), Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հանրապետական երրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 21–22:

34. Քոչարյան Գ. 1998, Արտաշատի մերձքաղաքային տարածքի տնտեսական ներուժը, Քալանթարյան Ա., Հարությունյան Ս. (խմբ.), Հին Հայաստանի մշակույթը. XI հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 69–70:

35. Քոչարյան Գ. 1998, Նոր անդրադարձ Դվին տեղանվանը, Քալանթարյան Ա., Հարությունյան Ս. (խմբ.), Հին Հայաստանի մշակույթը. XI հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 71–72:

36. Քոչարյան Գ. 1998, Դվինի մահարձանի պատկերագրությունը՝ որպես անձը ներկայացնող գաղափարագիր, Վարդումյան Դ. (խմբ.), Ավանդույթն ու նորույթը հայոց կենսապահովման մշակույթում V. Հայաստանի ազգագրության պետական թանգարանի հիմնադրման 20-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, ՀՀ Պաշտպանության նախարարություն, 49–51:

37. Քոչարյան Գ. 1999, «Արքունի ծառազարդ ապարանքը» Երվանդակերտից առաջ և հետո, Գիտական աշխատություններ, N II, Գյումրի, 120–126:

38. Քոչարյան Գ. 2000, Դվին տեղանվան վաղեմության հարցը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, 132–138:

39. Քոչարյան Գ. 2000, Արտաշես Ա Բարին՝ որպես հզոր պետականություն կերտող (Կերպարային դիմանկարի վերականգման փորձ), Գիտական աշխատություններ, N III, Գյումրի, 22–27:

40. Քոչարյան Գ. 2000, Արտաշես Առաջինը՝ որպես հզոր պետականություն կերտող (Անհատականությունն ըստ գործելակերպի), Հայրապետյան Ս. և այլք (խմբ.), Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հանրապետական չորրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, ՀՀ ԳԱԱ հայագիտական հետազոտությունների կենտրոն, 15–17:

41. Քոչարյան Գ. 2001, Դվին ամրոց-սրբավայրը Հայոց դարձի նախօրեին, Հարությունյան Ս., Քալանթարյան Ա. (խմբ.), Հայոց սրբերը և սրբավայրերը. ակունքները, տիպերը, պաշտամունքը, Երևան, «Հայաստան», 289–296:

42. Քոչարյան Գ. 2002, Դվինը վաղ Արշակունյաց շրջանում (Ուրվագծման փորձ), Պատմա-բանասիրական հանդես, N 3, 206-214:

43. Քոչարյան Գ. 2002, Դվինի պատմության ցարդ անհայտ մի դրվագ, Քալանթարյան Ա., Հարությունյան Ս. (խմբ.), Հին Հայաստանի մշակույթը XII. Հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, «Գիտություն», 61–65:

44. Քոչարյան Գ. 2004, «Տաճար մայրի» կաղնետունկ անտառապուրակ, Հանդէս ամսօրեայ, N 1–12, 415–428:

45. Քոչարյան Գ. 2005, Տիր/Տիւր աստվածությունը «Հայոց մեծաց» սերնդաշարքում, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, 130–141:

46. Քոչարյան Գ. 2005, Խոսրովակերտ արքայական անտառապուրակ, Հանդէս ամսօրեայ, N 1–12, 339–344:

47. Քոչարյան Գ. 2005, Տիրի պաշտամունքի վաղեմության հարցը, Քալանթարյան Ա. և այլք (խմբ.), Հին Հայաստանի մշակույթը XIII. Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երևան, «Մուղնի», 183–185:

48. Քոչարյան Գ. 2005, Դվինի մահարձանի պատկերագրությունը՝ տեղեկատու վավերագիր, Նոր ազգագրական հանդես, N Ա, 94–99:

49. Քոչարյան Գ. 2007, Դվինի պատմության շրջադարձային հանգրվանը, Հանդէս ամսօրեայ, N 1–12, 205–212:

50. Քոչարյան Գ. 2008, Մոխրաբլուր հնավայրը (Անտիկ շերտի բնութագիրն ըստ 1975, 1977 թթ. պեղումների արդյունքների), Հուշարձան, N Դ-Ե, 160–168:

51. Акопян Н.Г., Бабаян Ф.С., Жамкочян А.С., Калантарян А.А., Кафадарян К.К., Кочарян Г.Г. 2008, Двин IV: Город Двин и его раскопки (1981–1985 гг.), Археологические раскопки в Армении, N 24, Ереван, «Гитутюн».

52. Քալանթարյան Ա., Հակոբյան Ն., Ժամկոչյան Ա., Բաբայան Ֆ., Քոչարյան Գ. 2008, Դվինի հնագիտական արշավախմբի 2006 թ. աշխատանքների հիմնական արդյունքները, Ավետիսյան Պ. և այլք (խմբ.), Հին Հայաստանի մշակույթը XIV. Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Երևան, «Գիտություն», 265–286:

53. Քոչարյան Գ. 2010, Հայաստանի գյուղատնտեսությունը մ.թ.ա. VI–IV դդ., Պատմաբանասիրական հանդես, N 2, 169–177:

54. Քոչարյան Գ. 2011, Հայաստանի գյուղատնտեսությունը մ.թ.ա. III–I դդ., Պատմաբանասիրական հանդես, N 1, 253–260:

55. Քոչարյան Գ. 2011, Դվինի միջնաբերդի անտիկ շերտի բնութագիրը (1986-1989 թթ. պեղումների արդյունքները), Հուշարձան, N Է, 66–73:

56. Քոչարյան Գ. 2012, Դվինի տարածքում հայտնաբերված բազմանիստ կնիքը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2–3, 352–355:

57. Քոչարյան Գ. 2013, Արտաշիսյան ժամանակաշրջանի շինություն Դվինում, Հուշարձան, N Ը, 97–107:

58. Քալանթարյան Ա., Հակոբյան Ն., Ղաֆադարյան Կ., Ժամկոչյան Ա., Բաբայան Ֆ., Քոչարյան Գ., Քալանթարյան Ի., Միրիջանյան Դ. 2013, Դվինի 2007-2008 թթ. պեղումների հիմնական արդյունքները, Էջմիածին, N Ե, 202–212:

59. Քոչարյան Գ. 2014, Անտիկ Դվինը ամրոց-սրբավայրից արքայանիստ քաղաք, Բանբեր հայագիտության, N 1, 26–46:

60. Հակոբյան Ն., Ժամկոչյան Ա., Բաբայան Ֆ., Քոչարյան Գ., Մելքոնյան Հ. 2015, Դվին քաղաքատեղին (2009, 2011–12 թթ. պեղումների արդյունքները), Հուշարձան, N Ժ, 5–29:

61. Kocharian G. 2015, Archaeological Survey of Dvin of the Classical and Early Medieval Periods, Fundamental Armenology, N 2, 206–223.

62. Քոչարյան Գ. 2016, Դվինի վաղմիջնադարյան կղմինդրը որպես թվագրման գործոն, Բանբեր Երևանի համալսարանի, N 2, 28–37:

63. Քոչարյան Գ. 2017, Դվին բազմաշերտ հուշարձանի ձևավորման ընթացքը, Հանդէս ամսօրեայ, N 1–12, 1–21:

64. Քոչարյան Գ. 2017, Դվին ամրոց-սրբավայրը անտիկ ժամանակաշրջանում, Փիլիպոսյան Ա. (խմբ.), «Խոսրով Կոտակից մինչև Կարո Ղաֆադարյան». Հանրապետական գիտական նստաշրջան՝ նվիրված անվանի հայագետ Կարո Գրիգորի Ղաֆադարյանի ծննդյան 110-ամյա հոբելյանին, Զեկուցումների հիմնադրույթներ, 17 հուլիսի 2017 թ., Երևան, ՀՀ ԿԳ նախարարության Գիտության պետական կոմիտե, 28–30:

65. Քոչարյան Գ. 2018, Դվինի անտիկ շերտի վերլուծությունը՝ ըստ բլրի գագաթի հարթակի նյութերի, Ավետիսյան Հ. (խմբ.), Արագածի թիկունքում. Հնագիտական հետազոտություններ՝ նվիրված Տելեմակ Խաչատրյանի հիշատակին, Երևան, «Գիտություն», 233–239:

66. Քոչարյան Գ. 2018, Դվինի մայր տաճարի շերտագրության շուրջ (ըստ 1992–1993 թթ. պեղումների արդյունքների), Բանբեր Երևանի համալսարանի, N 2, 3–12:

67. Քոչարյան Գ. 2019, Դվինի կենտրոնական թաղամասի անտիկ շերտի բնութագիրը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, 293–303:

68. Քոչարյան Գ. 2019, Դվին հնավայրի շերտագրման ճշգրտումներ՝ ըստ 2013 թ. պեղումների արդյունքների, Բանբեր Երևանի համալսարանի, N 2, 76–83:

69. Petrosyan H., Ghafadaryan K., Hakobyan N., Babayan F., Zhamkochyan A., Kocharyan G. 2021, Recent Archaeological Research at Dvin, Avetisyan P., Bobokhyan A. (eds.), Archaeology of Armenia in Regional Context, Yerevan, IAE Publishing House, 331–341.

70. Худавердян А.Ю., Оганесян А.А., Енгибарян А.А., Матевосян Р.Ш., Кочарян Г.Г., Паланджян Р.С., Еганян Л.Г., Хачатрян А.А. 2020, Население Армянского нагорья в эпоху античности (по краниологическим материалам городских и сельских поселений), Вестник археологии, антропологии и этнографии, N 1, 95–114.

71. Քոչարյան Գ. 2021, Դվինի ամրոց-սրբավայրի մշտնջենական խորհուրդը, Պատմաբանասիրական հանդես, N 1, 180–191:

72. Քոչարյան Գ. 2021, Դվին ամրոց-սրբավայրը պատմամշակութային համատեքստում, Գիտական աշխատություններ, N 2(24), Գյումրի, 80–86:

73. Քոչարյան Գ. 1922, Անտիկ Դվինը համաժամանակյա բնակավայրերի համակարգում, Հուշարձան, N ԺԸ, 9–17:

74. Քոչարյան Գ. 1922, Շիրակի պաշտպանական համակարգի ձևավորման գործընթացը, Գիտական աշխատություններ, N 2(25), Գյումրի, 81–90:

75. Քոչարյան Գ. 2025, Դվին V. Անտիկ Դվին, Հնագիտական պեղումները Հայաստանում, N 26, Երևան, ՀԱԻ հրատ.:

Արսեն Բոբոխյան
Arsen Bobokhyan
Арсен Бобохян

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia
Институт археологии и этнографии, Национальная академия наук, Армения

arsen.bobokhyan@sci.am

DOI: 10.53548/0320-8117-2026.1-302